ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ
ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ

REPUBLIC OF ARMENIA
"STUDENT SPORTS
FEDERATION" NGO

**Երևան 0052, Ծարավ Աղբյուր 55/11, 35**
**հեռ. +(37494) 008458, +(37496) 007447**
**e-mail: armssf.info@gmail.com**

**Tsarav Aghbyur 55/11, 35 YEREVAN, 0052,**
**tel. +(37494) 008458, +(37496) 007447**
**e-mail: armssf.info@gmail.com**

***№ 50 «26» «06» 2025թ.***

## ՀՐԱՄԱՆ
## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը ՝

Հայտնում եմ, որ 2025 թվականի մայիսի 21-ին հայտարարվել է ՀՈՒՄՖ–ԳՀԱՊՁԲ-25/2 ծածկագրով սպորտային հագուստ, կոշիկ – այլ պարագաների գնման մրցույթ, որտեղ սահմանվել է ամբողջական սպորտային համազգեստ՝ լրակազմ, ինչպես նաև պարտադիր պայման է հանդիսացել՝

-ներկայացված ապրանքները պետք է լինեն չօգտագործված,

-ժամկետի սղության պատճառով պայմանագրի կնքելուց հետո մատակարարը մինչև 3 օրվա ընթացքում պարտադիր պետք է համաձայնեցնի նմուշը ՊՍ ղեկավարի հետ:

Վերը նշված պայմանը արձանագրվել է նաև 20.06.2025թ-ին կնքված պայմանագրի մեջ, որը հաստատվել է ԱՁ Վարդուհի Թովմասյանց Աբրահամի /այսուհետ՝ Կատարող կամ Մասնակից/ կողմից, որպես հաղթող մասնակից:

Սակայն, պայմանագիրը կնքելուց հետո Պատվիրատի ևս մեկ ծանուցմանը Կատարողը պատասխանել է «Ստացա Ձեր նամակը, երեք աշխատանքային օր հետո կպատասխանեմ» և սահմանված ժամկետում չի ներկայացրել պատվերի նախնական նմուշը:

Հարկ եմ համարում նշել, որ Մասնակիցը առնվազն 3-4 անգամ ծանուցվել է արդեն իսկ հրապարակային հրավերի մեջ արձանագրված պայմանի վերաբերյալ և ունեցել է բավարար ժամանակ հարցումների և պարզաբանումների համար: Ինչպես նաև վերջինիս կողմից գործողությունների իրականացման ժամանակ պահպանել է առավելագույն

ժամկետները ժամանակ շահելու համար, որի պատճառով մրցույթը արհեստականորեն երկարել է:

*Հրամայում եմ*

ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պայմանագրի | | | | | Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/ | | | Պատվիրատուի անվանումը | Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հրապարակելու ամսաթիվը | Իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծածկագիրը | չափաբաժնի համարը | գնման առարկայի անվանումը | չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/ | անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| **ՀՈՒՄՖ-ԳՀԱՊՁԲ-25/2** | **ՀՈՒՄՖ-ԳՀԱՊՁԲ-25/2** | 1 | սպորտային հագուստ, կոշիկ – այլ պարագաներ | 144,000 | 4,320,000 | ԱՁ Վարդուհի Թովմասյանց Աբրահամի | 40649637 | ք.Չարենցավան 5 թաղ | «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ | 26.06.2025թ | ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդված, 466-րդ հոդվածի 3-րդ մաս, Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով | Չի ներկայացրել հագուստի նմուշը, որը նախապես հրավերում այնուհետև պայմանագրում սահմանված է եղել |

Առդիր՝ 1 փաթեթ:

ՆԱԽԱԳԱՀ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ